ՆՈՐ-ԴԱՐ

№ 186 ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ, 8 Դեկտեմբերի 1901 Շաբաթ, 8 Դեկտեմբերի ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 186

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր.50 կ., ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.: Բաժանորդ են գրւում Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէ՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ" կամ Tiflis, Rédaction ,,Nor-Dar''

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 3-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով: Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ:

ՆՈՐ-ԴԱՐ

(ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Քաղաքական-գրական ամենօրեայ Թերթը 1902-ին *հրատարակւում է Թիֆլիսում նոյն ծրագրով և ուղղութեամբ ամեն օր, բացի տօներին հետևող օրերից:*

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 *րուբլի, վեց ամսուանը՝* 6 *րուբլի, երեք ամսուանը՝* 3 *ր.* 50 *կ., Թիֆլիսից դուրս՝ ամիսը* 1 *ր.* 50 *կ., հատով դուրսը՝* 7 *կ., Թիֆլիսում* 5 *կ.:*

Բաժանորդ են գրւում միմիայն խմբագրատանը:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ բաժանորդները վճարում են տարեկան 30 *ֆրանկ:*

Յայտարարութիւնները ընդունւում են և՛ օտար լեզուներով բառը 2 *կ., առաջին երեսումը՝* 4 *կոպէկ:*

Խմբագրատունը գտնւում է Դաւիդովսկայա փողոց, տ. № 5.

Պօստով «Նոր-Դար»-ի հասցէն Тифлисъ въ Редакцію „НОРЪ-ДАРЪ"*կամ* Tiflis (Caucase), Rédaction du journal «Nor-Dar».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Տրտունջներ:
Քրոնիկոն.—Լուրեր:
Մեզ գրում են.—Ախալցխայից: Նիժից: Քութայիսից:
Նամակ խմբագրութեան:
Մամուլի շուրջը:
Նոբէլի մրցանակը:
Թղթակցութիւն.—Հայրութից:
Մեր չարն ու բարին:
Քաղաքական.—Անգլիա: Ֆրանսիա:
Հեռագրական լուրեր:
Խառն լուրեր:
Բանասիրական.—Ֆրիդրիխ Նիցշէ և Նրա աշխարհահայեցողութիւնները:
Յայտարարութիւններ:

ՏՐՏՈՒՆՋՆԵՐ

Ժ.Բ.

—

Մեռաւ հայր Ալիշանը: Նա մեր ժամանակի նշանաւոր հայերից էր՝ նշանաւոր իբրև բանաստեղծ, իբրև հնագէտ, իբրև բանասէր: Հայկական նեղ շրջանում չէ յայտնի նա միայն. Նրա մահը, ինչպէս պէտք էր սպասել, խոր վիշտ ու ցաւ պատճառեց գրականութիւնը կորցրեց իր բեղմնաւոր, տոկուն, համբերատար ու երկարամեայ մշակներից մէկին: Բայց մենք չենք ուզում գրուատել նրա անձնաւորութիւնը կամ քննել նրա գրական հռչակաւոր գործերը. մենք ուզում ենք միայն նրա մահուան աթիւ ծագած մի խնդրի վրայ դարձնել ընթերցողի ուշադրութիւնը:

Մի գրական գործչի մատուցուած ամենաբարձր յարգանքն այն պիտի լինի, որ յարգողները կարողանան նրա գրական փառքն անցկացնել յաջորդ սերունդներին, նրա գործերով կրթել յետնորդներին: Այստեղից է ահա սկսւում անմահութիւնը: Շեկսպիրն արձաններով, ներբողներով չէ անմահութիւն ժառանգել. ամեն անգամ երբ ահագին բազմութեան առաջ ներկայացնում են նրա հանճարի որևէ արդիւնքը, իսկոյն վերակենդանանում է հանդիսատեսի առաջ այդ գրական հսկան իւր ամբողջ մեծութեամբ: Այսպէս, երբ գիւղացի ընթերցողը իւր ձեռքում կունենայ «Նուագք»-ի կամ «Յուշիկք»-ի հատորները, նրա առաջ կը պատկերանայ մեր հայրենեաց անցեալ փառքը, որի գլխից ցոյց կըտայ իր գլուխը այդ փառքի երգիչ ծերունի Նահապետը իր համեստ, բայց պատկառելի գիրքով: Ի զուր են Դոնի ափերից և Ապշերոնեան Թերակղզուց գոչում գոչին բարձրացնում, որ անգրագէտ գիւղացին անգամ լսել է Ալիշանի անունը և Նրա երգերը. Նրան փառաբանողներից շատ շատերն էլ չեն կարդացել Նրա ազնուանչ գրուածքները, ուր մնաց անգրագէտ գիւղացին: Եւ սակայն այս բոլորը թողած այլ յարգանքով են ուզում պատուել հանգուցեալի յիշատակը, մի յարգանք, որ ուրիշ հանգամանքներում Նրանց ծիծաղելի կը թուայ:

Հայր Ալիշանի հոգու փրկութեան համար աղօթել են Վենետիկում՝ այն եկեղեցում, որի բարգաւաճման նախանձախնդիրն է եղել հանգուցեալը, աղօթել են Վիեննայում, աղօթել են Կ. Պոլսում: Թիֆլիսում առաջնորդական փոխանորդից էլ պահանջեցին աղօթել հայոց եկեղեցում. հրաւէր կարդացին բոլոր հայերին հոգեհանգիստներ կատարել հանգուցեալի յիշատակի համար: Բայց առաջնորդական փոխանորդ վարդապետը իր իրաւասութիւնից վեր համարեց այդ: Եւ ահա մի շարք կրքեր զեղմունքներ դուրս թափուեցան. այդ դիպլոմաւոր երիտասարդ աստուածաբանը, Լութերի հայրենիքում կրթուած այդ վարդապետը համարձակուեց մերժել լուսաւոր աշխարհականների պահանջը: Ինչ յոխորտանքներ. Հեռու հորիզոնում կարելի էր նշմարել մի շարք «սև խաչերի» ծայրեր: Բայց ովքեր են սպառնացողները. Նրանք, որոնք Լութերի անունով են խօսում, որի կազմակերպած եկեղեցում հոգեհանգիստ, թափօրի և այլ նման ծիսակատարութիւնների մասին խօսք անգամ լինել չէ կարող, Նրանք, որոնք անտեղի միջնադարեան խաւարի հետ են համեմատում մեր եկեղեցական կարգերը: Հոգեհանգիստ...Կամով, զօռով հոգեհանգիստ կատարել տալ...սա էլ մի այլ տեսակի ազատութիւն է: Երբ խօսում ենք կրօնի և կրօնական զանազան խնդիրների մասին, մեզ պախարակում են, փտած, միջնադարեան խաւարին դարձած համարում. երբ հաւատաւոր ժողովուրդը թափօրով դուրս է գալիս Աստուծոյ ողորմութիւնը խնդրելու անձրևի կամ արևի համար, ասում են, որ դրանով ծաղրում ենք բնութեան հաստատուն, մազի չափ անգամ չխախտուող օրէնքները. բայց ստիպում են մեզ աղօթել մի մեռած մարդու հոգու փրկութեան համար. հապա ուր մնաց բնութեան օրէնքը: «Դա բոլորովին այլ բան է»: Հոգեհանգիստը, «միջնադարեան խաւարի» այդ ծնունդը զօռով քարշ տալ, մէջ տեղ բերել էք աշխատում հակառակ ձեր դաւանանքին և առարկում թէ դա «բոլորովին այլ բան է»: Ցիշում էք, մի գրութիւն կայ, որի դէմ դուք կռւում էիք.—դա կոմպրոմիսն է. իսկ ձեր նոր արածը կարելի է կոչել կոմպրոմիսների կոմպրոմիս: Մեր ժամանակը գիտութեան և մարդկային մտքի մեծ յաղթանակների ժամանակ է, ասել էք դուք վերամբարձ գլխով և օրինակելի քաղաքների մի հրատարակութիւնը (Փարրար) անախրոնիզմ համարել, ցաւել էք, որ հազար տարիներից ի վեր այդ (իմա կրօնական) ոգով ենք կրթուել և ոչինչ չենք շահել, խեղճ ենք մնացել. այդ բոլորից յետոյ ինչո՞ւ էք աղօթքներին դիմում գիտութիւնը սիրող մի մարդու յարգելու համար: Ով հոգեհանգիստը լոկ ծիսակատարութիւն և «միջնադարեան խաւարի» ծնունդ չէ համարում, ով աղօթքը մի շարժիչ ոյժ է ընդունում, որ տեղ և ժամանակ չունի, նա միայն պիտի պահանջէ մէկի յիշատակը հոգեհանգստով յարգել: Մի տեղ կրօնը մի աննշանակ բան ցոյց տալ, ասել, որ նա կորցրել է իր դերը ազգերի քաղաքակրթութեան մէջ, և միւս կողմից գովել մի վարդապետի (սպիտակագլուխ թէ սևագլուխ), որ հոգեհանգիստ է կատարել, և պախարակել միւսին (այստեղ սևագլուխ), որ մերժել է կատարել հոգեհանգիստը—դա կոմպրոմիսի մարդու գործ է: Երբ չէք հաւատում ծիսակատարութիւններին և ցանկանում էք Նրանցով յարգել մի մարդու, արդեօք դրանով չէք անպատւում հանգուցեալի յիշատակը: Այստեղ արդէն մարդիկ են պէտք, որ անկեղծօրէն ձեռքը խղճի վրայ դնել կարողանան. բայց գաղափարի մարդիկ ո՞րտեղ գտնենք, քանի որ մեզանում բոլորը քաղաքականութեան, հանգամանքների և պայմանների մարդիկ են: «Նպատակն արդարացնում է միջոցները»—ահա մեր ազատամտութեան անունով խօսող խաւարամիտների դաւանանքը:

Ա. Դեանջեցեան

ՔՐՈՆԻԿՈՆ

—

Հինգշաբթի, դեկտեմբերի 6 ին, Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչի անուանակոչութեան օրը էքզարխատան եկեղեցում, հայոց ս. Նշան եկեղեցում և միւս դաւանութեանց աղօթատներում հանդիսաւոր գոհաբանական մաղթանքներ կատարուեցին, որի ժամանակ Արսենալի լեռան վրայից 21 անգամ թնդանօթ արձակուեց: Քաղաքն առաւօտեանից զարդարուած էր դրօշակներով, իսկ երեկոյեան լուսավառուած էր:

— Վեհափառ Կաթողիկոսը մի առանձին կոնդակով պատուիրել է Թիֆլիսի թեմի առաջնորդական փոխանորդ արժ. Գարեգին վարդապետին իբրև հոգևոր բարձր իշխանութեան ներկայացուցիչ հսկել ամբողջ թեմի հոգևոր եկեղեցական գործերին, այցելել բոլոր դպրոցները և խստիւ հետևել կրօնուսոյց հայերի դասաւանդութեան, միջամտել նոր կրօնուսոյցներ նշանակուելիս և իւր գիտողութիւններն ու կարծիքները գրաւոր ներկայացնել Նորին Վեհափառութեանը: Մանաւանդ պատուիրուած է խիստ հսկողութիւն ունենալ երեցփոխական հաշիւների վրայ:

— Այսօր, դեկտեմբերի 8-ին, Թիֆլիսի դատական պալատում նշանակուած է

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՖՐԻԴՐԻԽ ՆԻՑՇԷ ԵՒ ՆՐԱ ԱՇԽԱՐՀԱՀԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ *)

—

(Վերջ)

Նիցշէի խորհրդածութիւնները տալիս են մեզ բոլորովին մանր, խիստ նեղ, բուն անձնական տպաւորութիւնների և գիտողութիւնների ընդհանրացումներ: Նիցշէի խելքը դիլետանտի խելք է, ուստի զարմանալի չէ, որ նա նայում է կեանքի վրայ, ինչպէս «փորձի» վրայ, կամ, ինչպէս ասում է Ռընանը, «սիրելի, զմայլելի մի զբօսանքի վրայ»:

Նիցշէն ամեն քայլափոխում գործում է նոյն սխալը, ինչ որ Նա վերագրում է փիլիսոփաներին, այսինքն իր՝ հիւանդ մարդու անձնական «դիետան» ընդհանուր կանոն և ընդհանուր երևոյթ է դարձնում: Թէև Նիցշէն մերժում է ամեն տեսակ բարոյականութիւն, սակայն նա բարոյականութեան երկու տիպ է որոշում—«տէրերի և ստրուկների բարոյականութիւն»: «Տէրերի բարոյականութիւնը» նա փառաբանում է, իսկ «ստրուկների բարոյականութիւնը» ստոր, խայտառակ երևոյթ է նկատում: Պարզենք մի քանի խօսքով, թէ ինչի մէջ է կայանում տէրերի բարոյականութիւնը. այդ բարոյականութիւնը ներկայացնում է սովորութիւններ և բնազդներ, որոնք առաջ են եկել իշխանութեան, ամեն ինչ տիրապետելու ձգտումից, հետևաբար տէրերի բարոյականութեան հիմքն է կազմում ամենից առաջ հպարտութիւնը. այդ դէպքում Նիցշէն գործ է ածում «Vornehm» ածականը, որ նշանակում է իսկապէս «երևելի», և ամեն տեսակ լաւ յատկութիւններ է վերագրում «տէրերի բարոյականութեանը», իսկ ստրուկների բարոյականութեան յատկանիշներն են՝ խոնարհութիւն, հնազանդութիւն, բարութիւն, անձնազոհութիւն և այլն: Հրէաստանի և Հռոմի կռիւը՝ բարոյականութեան այդ երկու տիպերի կռիւ է. քրիստոնէութիւնը, որպէս մերձաւորի սիրոյ կրօն, հրէականութեան ժառանգութիւն է. և փիլիսոփայութեան հետ միացած՝ երբ թէ ամենից շատ է նպաստել Եւրոպայի բարքերի ապականութեան, ստեղծելով «երամական բարոյականութիւն»: Ռամկավարական շարժումը քրիստոնէութեան անմիջական ժառանգութիւնն է. «այդ շարժման ընթացքը խիստ դանդաղ է թւում անհամբեր, հիւանդ, վերոյիշեալ երամական բնազդներով վարակուած մարդկանց. այդ բանին ապացոյց կարող է ծառայել աւելի բարձր և ուժգին կերպով տարածուող չուն անիշխանական շների հաչոցը. այդ անիշխանականներն աւելի ու աւելի պարզ են ցոյց տալիս իրենց ատամները» (Jenseits): Նիցշէն սիրոյ և գթութեան վրայ հիմնուած բարոյականութեանը հակադրում է հետևեալ կանոնը, որ Զրադաշտի բերանով է ասում. «Եղէք անխիղճ. մի խնայիր քո մերձաւորին»:

Լինել հպարտ՝—ահա այդ, բարձրագոյն տիպի, մի խումբ գերմարդկանց (Uebermenschen) իդէալը, մի խումբ, որ պիտի կազմուի մասսայի՝ ամբոխի ստրկացմամբ: Թէ ինչ է նշանակում հպարտ, Նիցշէն բացատրում է մի ամբողջ շարք աֆորիզմների մէջ «Was ist Vornehm» ընդհանուր խորագրի տակ «Jenseits —neuestes Haupfstück» գրքի մէջ: «Հպարտ» ածականով պիտի հետևեալ յատկութիւնները հասկանալ—եսականութիւն, «տարածութեան պաթոս», կամ այլապէս ասելով՝ բարձրագոյն լինելը, աստիճանի (чинъ) բնազդ և այսպիսի շատ «որժանաւոր» բաներ: Հետաքրքրական է իմանալ, թէ ինչպէս է բացատրում Նիցշէն «եսականութիւն» բառի իմաստը: «Եսականութիւնը հպարտ հոգու նշան է և բղխում է անյողդողդ հաւատից. այնպիսի էակին, որպիսին մենք ենք, բոլոր մնացեալները, իրենց բնութեան համաձայն, պարտաւոր են հնազանդուել և իրենց անձը զոհել (Jens.): Լաւ և առողջ արիստոկրատիայի ամբողջ էութիւնն այն է, որ նա չնայի իրեն, ինչպէս որ և է բանի ֆունկցիայի (օրինակ, արքայական իշխանութեան կամ հանրապետութեան) վրայ, այլ իրեն համարի նրա իմաստը և հիմնական սկզբունքը, ուստի մաքուր խղճով ընդունի անթիւ մարդկանց բազմութիւնից զոհեր, մարդկանց, որոնք նրա համար ստորացել են մինչև ստրուկների և հասարակ գործիքների աստիճանը»:

Այստեղ, որպէս և «գերմարդկանց» ոգու այդ արիստոկրատիայի ամբողջ թէօրիայի մէջ, Նիցշէն կրկնում է Ռընանի խօսքերը (համեմատ. Նրա Dialogues) և միայն ժամանակ առ ժամանակ երևան է հանում այն, ինչ որ ֆրանսացի գրողը, որպէս նուրբ քաղաքագէտ, աչքից և զգոյշ կերպով թագցնում է, թէև նա, «որին պէտք է», կարող է հասկանալ, թէ բանն ինչո՞ւմն է: Այսպէս, օրինակի համար, խօսելով գերմարդկանց համար անհրաժեշտ զոհերի մասին, Ռընանն զգոյշ կերպով անասուններին է սահմանում «պարտաւորիչ աշխատանքի կաստայի» փոխարէն: «Հանճարեղ և արժանաւոր մարդկանց կերակրի համար սահմանուած անասունները գոհ կլինէին, եթէ իմանային, թէ ինչի են ծառայում» (Dialogues): Նիցշէի կարծիքով, հասարակութիւնը գոյութիւն չունի իր համար, այլ բարձրագոյն տիպի մարդկանց համար: Արդէն այդ բոլորից պարզ է, որ նա արդարացնում է պարազիտներին. ոչ մի կասկած չթողնելու համար նա որոշ և պարզ պնդում է, որ շահագործութիւնն արմատական կենսական երևոյթներից մէկն է: «Ընտրեալների կաստայի» անդամները չպիտի իրար շահագործեն, չպիտի իրար վիրաւորեն, պիտի յարգեն իրար կամքը, երբ նրանք իրապէս հաւասար են իրար ոյժով և այլ յատկութիւններով»: «Հպարտ հոգին ինքն իրեն է պատիւներ ընծայում»: Նիցշէն յարձակւում է «երամական բարոյականութեան վրայ», որովհետև, նրա կարծիքով, այդ բարոյականութիւնը վնասակար ներգործութիւն ունի անհատի զարգացման վրայ: Անհատի զարգացումը կամ մի քանի անձանց բարձր կատարելութեան հասնելը կազմում է, հեղինակի կարծիքով, պատմութեան նպատակը, իսկ հասարակութիւնը միայն այդ բանին որպէս հիմք է ծառայում: Համաձայն այդ բանին, անհաւասարութիւնը և մասսայի ստրկացումը քաղաքակրթութեան անհրաժեշտ պայման է նկատում Նիցշէն: «Բարձրագոյն քաղաքակրթութիւնը միայն այն հասա-

*) Տես «Նոր-Դար» № 180.

Թիֆլիսի քաղաքային վարչութեան նախակին կազմի դէմ յարուցուած դատը։ Ինչպէս յայտնի է, ապօրինի գործողութիւնների և պաշտօնի մէջ թերանալու համար մեղադրւում են քաղաքագլուխ Գ. Եւանգուլեան (հանգուցեալ), քաղաքային վարչութեան նախկին անդամներ Ռ. Ա. Իւանենկօ, Ի. Ա. Վերմիշև, իշխ. Ա. Մ. Երկայնաբազուկ-Արղութեան և նոյն վարչութեան այժմեան անդամ Ե. Ե. Խատրովեան:

— Կովկասի գիւղատնտեսական ընկերութեան խորհուրդը դեկտեմբերի 4-ին քննելով կովկասեան ցուցահանդէսն առաջիկայ տարուայ գարնանը վերաբանալու խնդիրը, որոշեց չվերաբանալ ցուցահանդէսը, ուստի մի յանձնաժողով ընտրեց ծախելու համար ցուցահանդէսի այն բոլոր շէնքերը, որոնք պատկանում են ընկերութեանը։

—Վերջնականապէս մշակուած է «Կովկասի տպագրական գործի աշխատաւորների փոխադարձ օգնութեան ընկերութեան» կանոնադրութեան ծրագիրը, որը քննելու համար ընդհանուր ժողով է նշանակուած դեկտեմբերի 16-ին Թիֆլիսի քաղաքային խորհրդի դահլիճում։

— Համառուսական վերջին մարդահամարի ժամանակ հաւաքուած տեղեկութիւններից երևում է, որ 1897 թ. յունուարի 28-ին Ռուսիայում բնակիչների թիւն էր ընդհանուր առմամբ 125.668,000 հոգի, որոնցից օրթոդոքս էին 87.384,000, հնածէս և աղանդաւոր — 2,173,000, կաթոլիկ-հռովմէական — 11.420,000, բողոքական—3.743,000, ուրիշ քրիստոնեաներ— 1.220,000, մահմեդական— 13.888,000, հրէայ—5.189,000, ուրիշ ոչ-քրիստոնեաներ—664,000. Կովկասում բնակչութեան ամենամեծ տոկոսը կազմում են օրթոդոքսները (49,48), ապա գալիս են մահմեդականները (34,54), իսկ երրորդ տեղը բռնում են երևի հայադաւանները, որոնք կազմում են «ուրիշ քրիստոնեաների» (12,49) խմբի մի մասը։

— Առաջիկայ տարուայ մարտ ամսին Պետերբուրգում բացւում է անտառագործական-արդիւնաբերական ցուցահանդէս։ «С.-Пет. Вѣд.»-ի ասելով, այդ ցուցահանդէսն են տարուելու կովկասեան ցուցահանդէսի անտառագործական բաժնի էքսպոնատները։

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ.—Ս. Էջմիածնի սինոդը 1888 թուին «Նոր-Դար»ի նոյն տարուայ 89րդ համարից տեղեկանալով, որ հայոց մի եկեղեցում հանգուցեալ Րաֆֆու հոգեհանգիստը կատարելու ժամանակ՝ քահանան դնում է գագաղի վրայ հանգուցեալի պատկերը և այս բանով եկեղեցում անտարապաշտութիւն է մացնում, 1889 թուի յունուարի 28-ին հրամայեց յիշեալ քահանային երկու տարի ժամանակով դադարեցնել քահանայագործութիւնը և գնալ ս. Գէորգ վանքն ապաշխարելու իր յանցանքը։ Այժմ միևնոյն յանցանքն է գործում Ախալքալաքի եկեղեցու աւագ քահանան. նա հոգեհանգիստ կատարելու ժամանակ դնում է կամ թոյլ է տալիս դնելու գագաղի կամ գերեզմանի վրայ Ալիշանի պատկերը:

—

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ.—Դեկտ. 24 ին, Դաւիթ մարգարէի տօնի առթիւ, տեղիս արժ. Դաւիթ աւ. քահ. Խարալեանի քահանայական 40-ամեակը պիտի տօնուի ընտանեկան մի համեստ շրջանում։

—

ՆԻԺԻՑ (Նուխու գաւ.)—Մեր և շրջակայ գիւղերի ցաւերից մէկն էլ անտառապահների անխիղճ վարմունքն է։ Ինչպէս յայտնի է, անտառապահների կազմած արձանագրութիւնները դատարաններում ընդունւում են որպէս զուտ ճշմարտութիւն, և այդ հիման վրայ դատաւորն առանց վկայի և հարց ու փորձի, անտառապահների ներկայացրած արձանագրութեան համեմատ, տուգանքներ է վճռում յաճախ անմեղ գիւղացիների վրայ։ Մի գիւղացի, որ անտառի մօտով անցնելու անգամ վախենում է, յանկարծ դատարան է կանչւում։ Ի՞նչ է, ինչ է պատահել։ Անտառապահը 50—60 ր. արձանագրութիւն է կազմել խեղճի վրայ: Եւ ինչու.—որովհետև անտառապահի մի օրեէ խնդրիքը մերժել է գիւղացին։ Այս օրերս մի գիւղացի գանգատւում էր անտառապահից, և պատճառը հետևեալն էր: Մի թուրք այդ գիւղացուն փող է տալու։ Թուրքի բարեկամ անտառապահն սպառնում է գիւղացուն, որ եթէ վերջինս ստանայ նրա բարեկամից իր ստանալիք փողը, այդ դէպքում ինքը անտառապահը գիւղացու վրայ 100 ր. արձանագրութիւն կը կազմի. Խեղճ գիւղացին երկու չարիքի փոքրագոյնն է ընտրում և հրաժարւում է իր ստանալիք փողերից։ Նորերս էլ մի ոչխարատէրի վրայ արձանագրութիւն են կազմել անտառապահները. այդ բանի շնորհիւ թուրք ոչխարատէրի վրայ 360 ր. տուգանք վճռուեց, այնպէս որ եթէ ոչխարատէրն իր բոլոր ոչխարները ծախէ միջակ գնով, էլի 50 ր. պարտք կը մնայ...

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Գ. խմբագիր

Մեր հայազգի բանաստեղծ և գրական գործիչ հայր Ալիշանի մահուան առթիւ հոգեհանգիստ կատարելու խնդիրը երկար վիճաբանութեան առարկայ դարձաւ հայոց թերթերում։

Որովհետև այն խնդիրը, թէ հոգեհանգիստը հայ լուսաւորչական եկեղեցում պիտի կատարուի թէ ոչ—դեռ պարզուած չէ, այն ինչ այդ հարցը կարելի է վճռել շուտով և պարզ կերպով, այն է՝ Թիֆլիսի կաթոլիկաց եկեղեցում կատարել տալով այդ հոգեհանգիստը, ուստի ես իմ կողմից առաջարկում եմ որ երկու հակառակող կողմերը և մեր ազգակից և հայրենակից հայ կաթոլիկ եղբայրները միանան և այդ պարտքը իրենց վրայ վերցնելով մօտ ժամանակում կատարել տան հայր Ալիշանի հոգեհանգիստը կաթոլիկաց եկեղեցում որով կըհաստատեն իրենց համակրութիւնը դէպի հայր Ալիշանը մի կողմից և դէպի համայն ազգութիւնը և եղբայրութիւնը միւս կողմից *)։

Հայ-Կաթոլիկ

Թիֆլիս, 6 դեկտ.

*) Դուք կըկնում էք «Նոր-Դար»-ի առաջարկութիւնը. ի հարկէ եթէ կաթոլիկ-եկեղեցում հոգեհանգիստ կատարուի, հանգուցեալի յիշատակը յարգել կամեցողներն իրենց պարտքը կըհամարեն ներկայ լինելու: Խմբ.

ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

—

Ռուսիայի զեմստվօներից շատերը փորձ են արել իրենց իրաւասութեան տակ գտնուած նահանգներում տարրական ուսումն ընդհանրացնել՝ այնպէս անել, որ իւրաքանչիւր գիւղի, շէնի երեխան կարողանայ գրաճանաչ դառնալ. բայց այդ ցանկութիւնը չի իրագործուել, չնայելով նրա կարևորութեանը։

«С. Пет. Вѣд.» լրագրի մէջ պ. Չիչերին, որն, ինչպէս երևում է, նրանցից չէ, որոնք տարրական գիտելիքների հանրացման դէմ են, մի քանի դատողութիւններ է տալիս այդ մասին՝

Նա միանգամայն քաջալերութեան արժանի է համարում զեմստվօների բարի ցանկութիւնը, ընդունում է նրանց հետ միասին, որ ռուս ժողովրդին ուսում է հարկաւոր, որպէս գի հնար լինի տաշել նրա վայրագ բնութիւնը, որպէս գի նա չմնայ իր հարևան եւրոպական ազգերից, որպէս գի, թօթափելով իրենից արևելեան թմրութիւնը, զարթնի, իմանայ ինչ է կատարւում իր շուրջը, որպէս գի, վերջապէս, հայրենիքի համար աւելի պիտանի, համեստ որդիք պատրաստուին:

Այդ բոլորը շատ լաւ գիտէ պ. Չիչերինն իբրև ինտելիգենտ մարդ. այդ չէ խնդիրը սակայն, այլ այն թէ՝ 1) միմիայն գրաճանաչ անելով գիւղացուն՝ բարձրացնում ենք նրա բարոյական կողմը. 2) գիւղացին միջոց ունի, որ լաւ վարժապետներ պահի։

Առաջին կէտի մասին պ. Չիչերինն մի քանի հիմնաւոր դատողութիւններ է տալիս, որոնք առանձին նշանակութիւն ունեն մանկավարժական և հոգեբանական տեսակէտներից։

Այն դէպքում, երբ գիւղացի երեխան միայն գրել-կարդալն է սովորում, նա բնութեամբ էլի նոյն գիւղացին է մնում, և, ընդհակառակ, ունեցած բնաւորութեանը մի վատ յատկութիւն էլ է աւելանում—անփառութիւնը։

Գիւղական դպրոցից դուրս գալուց յետոյ, աշակերտն երբ հասակն առնում է, սկսում է վայր ի վերոյ դատողութիւններ տալ, կեղծքումներ անել և, ի նշան կարծեցեալ լուսաւորութեան, այնպիսի ընթացք բռնել իր մասնաւոր և հասարակական վարմունքների վերաբերութեամբ, որ ամենի առաջ դատապարտելի է երևում։

Վիճակագրական տեղեկութիւններն անհերքելի ապացոյցներ են առաջ բերում թէ՝ յանցանքները շատանում են աւելի այնպիսի տեղերում, ուր տարածուած է չոր ու ցամաք գրաճանաչութիւնը։

Եւ այդ հոգեբանօրէն շատ հասկանալի է. գիւղացու արդիւնաբերական միջոցները նոյնն են մնում, ինչ որ կար գրաճանաչ դառնալուց առաջ. գիւղացին քանի որ սև ու սպիտակ չէր իմանում, իր պահանջների մէջ ժուժկալ էր. հիմա նրա պահանջները շատացել են, որովհետև գիւղացին լուսաւորուել է, ամօթ է որ առաջուայ ապրուստն ունենայ, և, ահա, սկսում է օրինաւոր և ապօրինի միջոցներով փող ճարելու ետևից ընկնել, իսկ փող ճարելու խնդիրը տանում է նրան դէպի զանազան յանցանքներ:

Այստեղից հետևում է, ասում է պ. Չիչերին, որ գրաճանաչութեան խնդիրը պիտի ուրիշ աւելի գրական հիմքերի վրայ դնել, որպէս գի աւելի մեծ ծաւալով վնասած չլինենք խեղճ ու աղքատ ժողովրդին, որ պետութեան կազմի հիմնաքարն է։ Հարկաւոր է, ասում է, այնպիսի տարրական ուսում տարածել խաւար ժողովրդի մէջ, որ նպաստի նրա մտքի խաւարը փարատելուն և բարոյական կողմը բարձրացնելուն։

Բայց այդ ո՞վ կանի, չէ՞ որ լաւ դպրոցն է միայն, որ օգուտ է տալիս, իսկ լաւ դպրոց ունենալու համար էլ պիտի լաւ վարժապետներ ունենալ։ Որդ՝ այն զեմստվօները, որոնք ցանկանում են ուսումը հանրացնել, ունի՞ն պատրաստի լաւ ուսուցիչներ։

Դրամով էլ չի վերջանում բանը, եթէ լաւ ուսուցիչներ են ճարուել. այժմ էլ ուրիշ խնդիր է ծագում, որից ամեն բան կախում ունի։

Խնդիր է գալիս թէ՝ զեմստվօն մտածել է այն մասին, որ գիւղական վարժապետի ջանքերն ի զուր չանցնին։

Հարկաւոր է դպրոցական կարգին շէնութիւն, դասական պիտոյք, գրադարան, և ուսուցչի ռոճիկ. սրանք այնպիսի անհրաժեշտ պայմաններ են, որ առանց դրանց անկարելի է լաւ դպրոց ունենալ, իսկ վատ դպրոցներից լաւն այն է՝ որ ամենևին չունենաս։

ՆՈԲԵԼԻ ՄՐՑԱՆԱԿԸ

—

Կովկասի նաւթարդիւնաբերողների մէջ հսկայաղէմ գործունէութեամբ յայտնի է Նոբէլ անունը, բայց շատերը չգիտեն, որ Նոբէլ անունն այժմ ամբողջ աշխարհում ակնածութեան, պատկառանքի և հիացման առարկայ է դարձել ո՛չ թէ նրա համար, որ այդ անուան հետ կապուած է հարստութեան համբաւը, ո՛չ ամենևին՝ աշխարհումս այնպիսի հարուստներ կան, որոնց մօտ Նոբէլն այնպէս է երևում ինչպէս աստղն արեգակի մօտ. Նոբէլը նշանաւոր է մի ուրիշ բանով—իր անզուգական կտակով։

Կտակ անող Ալֆրեդ Նոբէլ, որի որդիքը ներկայումս կերոսինի առևտուրով են պարապում Կովկասում, շուէդացի ինժեներ էր, յայտնի իր դինամիտի գիւտով. Զուեդիայի Բոֆոր քաղաքի թնդանօթաձոյլ գործարանի՝ գլխաւոր, տէր ու տնօրէն Ֆրանսիայի Սևրան քաղաքում ունեցած պայթուցիկ նիւթեր պատրաստող գործարանի,- վախճանուեց Պարիզում 1896 թ.

Հանգուցեալն իր ամբողջ կարողութիւնից թեթև բաժին թողնելով միայն իր ժառանգներին, մնացած մեծ մասը—40 միլիոն ֆրանկ (մօտ 16 միլիոն րուբլի) կտակեց հետևեալ կերպով։

Կարգադրել է, որ 5 մրցանակ նշանակուի, իւրաքանչիւր մրցանակը 210 հազար ֆրանկանոց։ Առաջին երեք մրցանակը նրանն է, առանց ազգի խտրութեան, ով կարևոր գիւտ կանի քիմիայի,

---

բակութիւնների մէջ է առաջ գալիս, ուր գոյութիւն ունեն երկու դասակարգեր՝ աշխատողների և դատարկապորտների, որոնք ընդունակ են իսկական հանգստութեան կամ, աւելի ճիշտ ասելով, պարապաւորիչ և ազատ աշխատանքի կատանեաներ». («Menschl.») Նիցշէն փիլիսոփայութեան մէջ դեկադենտ է, և այդ բանն ապացուցանում են նրա բոլոր գրուածքները, որոնք հերքում են ամեն տեսակ հիմնական սկզբունքներ։ «Չկայ ճշմարտութիւն—ամեն ինչ թոյլատրելի է»—այսպէս է ձևակերպում մեր փիլիսոփան իր բնազանցական և բարոյական ուսմունքը իր «Genealogie der Moral» գրուածքի մէջ։ Նիցշէն, որպէս և նրա նախորդները, գոյութեան կռուի թէօրիայից ձգտում է կեանքի համար կանոններ հանել. նա ասում է ամբոխը և կամ նրանց, որոնք «խիստ և խիստ շատ են» և որոնց ցանկալի կը լինէր ստրկացնել «գերմարդկանց» փոքրիկ խմբի համար (այն մի քանի հազարների համար, որոնց համար գոյութիւն ունի աշխարհը, Ռընանի՝ կարծիքով, կամ «բարձրագոյն մարդկանց» համար, ինչպէս անուանում է նրանց Բուրժէն). Նա ցանկանում է փիլիսոփաներին օրէնսդիրների դեր յատկացնել. «փիլիսոփաները, բառիս բուն նշանակութեամբ, օրէնսդիրներ և հրամայողներ են. նրանք ասում են, «այսպէս պէտք է լինի» (Jense). Նա համակրանք է տածում դէպի հպարտները, գոռոզները և ատելութիւն դէպի Ռուսսոն, դէպի անհատի իրաւունքների համար այդ մեծ մաքառողը, դէպի դեմոկրատիան և այլն։ Նիցշէն դիլետանտ է։ Իսկ դիլետանտութիւնը միշտ քաղքերի անկման շրջաններին է հատուկ և նրանց հետ սերտ կապ ունի։ Դիլետանտութիւնն արատաւոր չէ, ուստի բանակալական է և վնասակար։ Ազատ աշխատանքի մարդիկ՝ մարդիկ, որոնք աշխատում են իրենց բաւականութեան համար, շուտով դիլետանտներ են դառնում: Սկսում են իրենց զուարճութեան համար մի աշխատանք, եթէ այդ գործը ձանձրացնում է նրանց, ձգում են և մի նոր բան են սկսում և միշտ այսպէս. ուստի զարմանալի չէ, որ դիլետանտները գիտութիւնների և արուեստների մէջ ոչինչ հիմնաւոր բան չգիտեն և լուրջ աշխատելու ընդունակութիւնը կորցնում են։ Հէնց այդ տեսակ մարդկանց համար բարոյականութիւնը մի անյարմար հագուստ է. նա նրանց ճնշում է, նրանք միշտ նորանոր ազատութիւններ են որոնում. իրենց հանճարներ են երևակայում, մինչդեռ միայն գերօններ են։

Նիցշէն ասում է. «Հպարտները բարբարոսներ են, որովհետև նրանք աւելի ամբողջական մարդիկ են»։ Նրանց անսանձ բնազդները ցեղի գերազանցութեան նշան են նրա համար (այդ բոլորը չի խանգարում Նիցշէին, կեանքի ամբողջ նպատակը գիտութեան և արուեստի մէջ տեսնելու): Գերազանցութեան գաղափարը նա քաղել է Նատուրալիզմից. նա ասում է. որքան գերմարդը բարձր է մարդից, նոյնքան մարդը բարձր է կապիկից: Նիցշէն, որ լուրջ կերպով ընդունում է փիլիսոփայութիւնը, որպէս անձնական դեխաա, որ երբէք իր հասարակական մաքերը լուրջ, օբյեկտիւ կրիտիկայի չէ ենթարկել, գուցէ երբէք իրեն չէ հարցրել, թէ ինչի նման կըթուար իրեն այդ աշխարհը, աշխարհ՝ որից նա գոհ է, և որ նրա յոյսերը չի խաբել, եթէ անհաւատարիմ և յեղյեղուկ ճակատագիրը յանկարծ նրան պարտաւորէր աշխատանքի կաստայի անդամ դառնալ: Միթէ նա չէր վրդովուիլ, որ իր հանճարը կորաւ, որ Պեգասի վրայ լուծ է դրուած։ Բայց ո՞վ կարող է իմանալ, թէ քանի քանի իսկական հանճարներ, տաղանդներ չզարգացած, անհետանում մաշւում են կորստի այդ թշուառ կաստայի մէջ...

Անհատը միայն այն ժամանակ է աւելի բարձր, երբ առաւել մեծ ծանրութիւն է կրում, առաւել շատ պարտաւորութիւններ են դրուած նրա ուսերի վրայ։ Գերազանցութիւնը միլիօնատէր մարդկանց ուսերի վրայ ելնելու մէջ չէ կայանում, ինչպէս կարծում է Նիցշէն, այլ այդ միլիօնատէր մարդկանց իր սեպհական ուսերի վրայ կրելու մէջ է կայանում. Արդեօք ամբողջ պատմութեան մէջ մենք կը գտնենք աւելի բարձր անձնաւորութիւն քան Խաչեալը, որ ամբողջ մարդկութեան համար խաչուեց խաչի վրայ, այն խաչի վրայ, որի հսկայական ստուերը տարածուեց ամբողջ Եւրոպայի վրայ. բայց Նիցշէն այդ Խաչեալին անուանում է ստրուկների բարոյականութեան ստեղծող։ Նիցշէն ուսուցանում է մեզ, որ մարդ շատ առաջ ուղտ էր և ծանրութիւններ էր կրում, ապա դարձաւ առիւծ և վերջապէս երեխայ։ Ուրեմն մարդ երեխայ պէտք է լինի, պիտի ցանկանայ ինչպէս երեխայ և գնայ այնտեղ, ուր մղում են նրան իր կրքերը։ Միթէ քաղաքակրթութեան այդքան դարերից յետոյ չի հասել ժամանակը, որ երեխան հասակն առած մարդ դառնայ։ Բարոյական օրէնքը գործնական կեանքի յենակէտ է. նա ոչ թէ «բռնակալութիւն» չէ, այլ, ընդհակառակը, նա է մեզ ազատ դարձնում և, Կանտի կարծիքով, մեր ազատութեան լաւագոյն ապացոյցն է՝ «Դու պարտաւոր ես, ուրեմն դու կարող ես»: Բարոյական օրէնքը կատարելութեան ձգտման լոգիական հետևանք է, ձգտման, որ կեանքին նպատակ է տալիս և մարդկութեան պատմութեան մէջ առաջադիմութիւն է ներկայացնում։ Շոպէնհաուէրի «Wille zum Leben» (Կեանքի տենչը) Նիցշէն փոխում է Wille zur Macht (Իշխելու տենչ), և այդ իշխանութեան տենչը նա կապում է յետադիմական ձգտումների հետ։

Մենք տեսանք, որ Նիցշէն ամբոխի, դեմոկրատիայի թշնամի է, ուստի նա նրանց յաճախ անարդար կերպով պախարակում է. օրինակ, պնդում է, որ ամբոխը չի յարգում և բացասական կերպով է վերաբերւում հանճարեղ մարդկանց։ Իրականութեան մէջ այդ գոյութիւն չունի։ Ճիշտ է, աշխարհի ոչ մի երկրի և ոչ մի ժողովուրդ չի համակրել այնպիսի հանճարներին, որոնք հեռու կըլինեն ժողովրդից, նրա ցաւերին անտարբեր կըվերաբերուէին և միայն անհասանելի բարձրութիւնից պատգամներ կարձակեն թշուառ մարդկութեան։

Նիցշէն այնքան էլ օրիգինալ, ինքնուրոյն չէ, ինչպէս կարծում են նրա յարգողները. նա մի նոր սիստեմ, նոր գաղափարներ չի մտցրել փիլիսոփայութեան մէջ։ Նիցշէի կրիտիկոս Վայգանդի կարծիքով, Նիցշէի վրայ ազդեցութիւն են ունեցել Դարվինը, Կոնտը, Սպենսերը, Դաստաևսկին, Բուրժէն և Ռը-

ֆիզիկայի և բժշկական գիտութիւնների սահմաններում, չորրորդը նա պիտի տանի, ով գրական այնպիսի մի վաստակ կը տայ, որը աշխարհիս գեղարուեստական գրականութեան մէջ իդէալական տեսակէտից ամենանշանաւորը, կատարեալը կը համարուի, և հինգերորդ մրցանակը նա կը տանի, ով աշխարհիս զինաթափի և խաղաղութեան վերաբերութեամբ ամենալաւ պրոպագանդը կանի։

Կտակով իրաւունք է տրուած բոլոր պետութիւնների ակադեմիաներին, որ կանդիդատներ առաջարկեն մրցանակաբաշխութեան համար, որը տեղի պիտի ունենայ իւրաքանչիւր տարի։

Բացի դրանից, սահմանուած է Չուեդիայում մի ինստիտուտ հանգուցեալի ծախսով, ուր ամեն աշխարհից եկող գիտնականները, որոնք միջոց ունին պրեմիայի համար վաստակ ներկայացնել, կարող են ազատ պարապել ունենալով բոլոր յարմարութիւնները, միայն գիտնական ժողովին պիտի վաղօրօք յայտնեն իրենց նպատակը։

Մրցանակի համար ներկայացրած վաստակների արժանիքը որոշելը վերապահուած է Չուեդիայի գիտութեանց ճեմարանի անդամներին։

Նոյն հանգուցեալի հաշուով Խրիստիանիա քաղաքում բացուած է «համաշխարհային խաղաղութեան ընթերցարան», որից կարող է օգտուել ամեն մի գիտնական,—ահա թէ ինչ կտակ է արել շուեդացի ինժեներ Ալֆրէդ Նոբէլը։

Ամենից դժուարը, ասում են գեղարուեստական վաստակի գնահատութիւնն է, այնպէս որ Չուեդիայի ակադեմիայի անդամներն ստիպուած էին նոյն իսկ այդ մասին հարցնել աշխարհահռչակ դրամատուրգ Հենրիխ Իբսենի կարծիքը, որը պատասխանել է, թէ ինքն էլ չի կարող լաւ հասկանալ կտակի այն խօսքերը, թէ գրական մրցանակը պիտի տալ «իդէալական մտքով ամենանշանաւոր գեղարուեստական գրական վաստակին», որովհետև, Իբսենի ասելով, անպայման իդէալական վաստակ չկայ աշխարհիս երեսին. այն, ինչ որ մի սերնդի համար իդէալական է թւում, եկող սերնդի համար կարող է մէջակ երևալ։

Ինքը Ալֆրեդ Նոբէլ, ասում է «Бирж. Вѣд.», կտակելիս շատ լաւ էր հասկանում և պարզ ըմբռնում այն նպատակը, ինչի համար որ իր ամբողջ կարողութիւնը կտակեց։

Իր ժամանակակից ընտիր հրապարակախօսների հետ միասին հանգուցեալը շատ լաւ էր իմանում, որ զէնքերի կատարելագործութիւնից է կախուած ընդհանուր խաղաղութիւնը, այսինքն՝ որքան հեշտացնել մարդ կոտորելու հնարը, նոյնքան մօտիկ հեռու կմնան իրար հետ ընդհարումից մարդիկ։

Հէնց այդ պատճառով էլ, ասում է լրագիրը, հանգուցեալն իր կեանքի ամբողջ ընթացքում իր բոլոր ուշքը նրան վրայ էր դարձրել, որ կատարելագործուած զէնքեր և սոսկալի պայթուցիկ նիւթեր յայտնագործի, ինչպէս և անում էր իսկապէս։

Նա լաւ էր հասկանում, թէ ինչպէս մեր ժամանակներում շատ և շատ ընդունակ անհատներ իրենց ամբողջ ոյժը լարած են միայն նրա համար, թէ ինչպէս այլեն, ինչպէս գլուխ գալու տանեն կեանքի անողոք պատերազմից, այնպէս որ անկարող են լինում գիտութեան, գեղարուեստի նուիրուել. այդ պատճառով ճշմարտութեան խուզարկուներին հանգստութիւն ու թեթևութիւն տալու համար կտակեց նա իր ամբողջ կարողութիւնը։

Որքան հիանալի է հանգուցեալի գիտութեան մշակներին պարգևած հանգստութիւնը, նոյնքան ծանր պարտականութիւն է դնում նուիրական մշակների վրայ նրա իդէալական պահանջը։

Այդ պատճառով սրտատրոփ սպասում էր ամբողջ գիտական աշխարհը, թէ ո՞ր ազգի լուսաւորն պիտի յաջողուի աշխարհի պարծանքը դառնալ արժանանալով Նոբէլի մրցանակին։

Մրցանակները տարան յետևեալ անձանց. ֆիզիկայից՝—Ռեօնդէն (Գերմանիա), քիմիայից՝—Վան-Հօֆ (Հոլլանդիա), բժշկականութիւնից՝—պրոֆ. Բերինգ (Գերմանիա), գեղարուեստական գրականութիւնից՝—Սիւլլի Պրիւդոմ (Ֆրանսիա), խաղաղութեան պրեմիան տուան հաւասար չափով՝ դուիցերացի պրոֆ. Դիւնանդ, Պարիզի պրոֆ.—Պասսի, իւրաքանչիւրը 105 հազարական ֆրանկ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱԴՐՈՒԹ, 29 նոյեմբերի.—Երկրորդ տարին է ահա, որ Գանձակի նահանգի ժողովրդական դպրոցների տեսուչը պահանջում է մեր հասարակութիւնից, որ տեղիս տղայոց երկդասեան ուսումնարանի համար գետին առնուի և շէնք կառուցի։ Տեղիս հասարակութիւնն այդ գործը գլուխ բերելու համար արդէն ժողովարարութեան է ձեռնարկել, բայց ցաւալին այն է, որ գործը խաղաղ կերպով առաջ չի ընթանում, այլ վէճ ու հայհոյանքի առիթ է տալիս շարունակ։ Այդպիսի անբարեբաղդ երևոյթի պատճառն է հետևեալը։ Ուսումնարանի համար գետին գնելու և շէնք կառուցանելու վրայ ծախսս կրդնայ ոչ պակաս քան 12,000 ր., որպիսի գումարից միայն 1500 ր. է հոգում կառավարութիւնը, մնացեալը թողնելով որ ժողովուրդը տատակարարի։ Արդ՝ ժողովրդի մեծ մասը, որ ի նկատի է առնում, թէ շատ դժուար է գործը գլուխ բերել այդ պայմաններում, ցանկանում է, որ ուսումնարանի շէնքը կառուցուի մի այն տեսակ գետնի վրայ, որի համար փող չվճարուի։ Եւ այդպէս ցանկացողները մեծամասնութիւն են անում մի այն տեսակ գետին, որ երկու հարիւր տարի իբր գերեզմանատուն է ծառայել տեղիս հայերին և որի վրայ քանդուած մի մատուռ էլ կայ։ Այդ գերեզմանատունը սրանից հինգ տարի առաջ, շնորհիւ տեղիս այն ժամանակուայ գիւղական բժ. պ. Տէր-Մինասեանի ջանքերի, շրջապատուեց ցանկապատով, և այդտեղ ծառեր տնկուեցին։ Նախկին գերեզմանատունն այսօր դարձել է մի հիանալի այգի։ Արդ՝ ժողովրդի մեծ մասը, ինչպէս ասացի, ցանկանում է իր ուսումնարանի շէնքն այդտեղ կառուցանել, իսկ փոքրամասնութիւնը հակառակ է այդ մտքին, պատճառաբանելով որ չի կարելի նախահայրերի շիրիմները քանդել փչացնել։

Հասարակութեան մեծ մասն այդ առթիւ խնդրամատոյց է եղել Չուշու Թեմական հոգևոր ատեանին, որպէս չի վերջինս զիջի գերեզմանատունը հասարակութեանը, որով վերջինս հնարաւորութիւն ունենայ այդ գետնի վրայ կառուցանելու ուսումնարանը։ Կոնսիստորիան դեռ ևս չի պատասխանել իրեն եղած դիմումին, և ցանկալի էր, որ հոգևոր կառավարութիւնը, ի նկատի առնելով գերեզմանատան սրբազան վայր լինելը, ուղղակի մերժէր հասարակութեան խնդիրքը։

***

ՄԵՐ ՉԱՐՆ ՈՒ ԲԱՐԻՆ

—

Մի ժամանակ մեր ժամուլի էջերը հեղեղում էին Նոր-Նախիջևանից գրուած թղթակցութիւններով։ Այժմ կատարեալ լռութիւն է տիրում. ինչ եղաւ, ինչ պատահեց, միթէ կեանքը մեռաւ, էլ ուշադրութեան արժանի ոչինչ չէ կատարւում...։ Ինչու չէ. բայց երբ տեսնում ես, որ գրելով ոչինչ չէ դուրս գալիս, որ մեր իշխանաւորների և, աւելացնենք, ժողովրդի ուղեղը ճշմարտութեան խօսքեր շատ լսելուց բթացել է ու անզգայացել, կամայ ակամայ գրիչը ձեռիցդ վայր կընկնի։ Ես էլ ուզում եմ ոյժերս փորձել, բայց ոչ թէ մի դրական հետևանքի գալու, հապա միմիայն ընթերցող հասարակութեան հետ մեր հասարակութեան կապը մի տեսակ պահպանած լինելու համար...

—

Ահա քանի ամիս է արդէն մեր գպրանոցի երրորդ յարկը շինուած, վերջացած է և ուսումն էլ կանոնաւոր կերպով շարունակւում է, բայց մինչև այսօր հաշիւ չկայ՝—ինչ փողով շինուեցաւ, ինչպէս շինուեցաւ։ Սակայն ահա մի ամիս է, որ հոգաբարձութիւնը խոստացել է հրապարակական հաշիւ տալ և այդ պատճառով էլ դպրանոցի սովորական տարեդարձի տօնախմբութիւնը յետաձգուած է, բայց բանն այսօր-վաղն ասելով մնում է։ Այս հասարակ հրապարակական հաշուետւութեան խնդիրը մենք շատ կարևոր ենք համարում՝—դա հասարակութիւնը օ կուրան կրպահէ հաստատութեան գործերի վերաբերմամբ... գոնէ տարին մի անգամ։ Պէտք է ասել, որ մինչև այսօր դպրանոցը հրապարակական հանդէսներ կատարել է միմիայն... խնամիների համար, և դա մի չարիք է, որ պէտք վերացնել։

—

Վերջին ժամանակներս Ռուսաստանում հրատարակուող «Пр. Край.» թերթը սկսել է նորից զբաղուել դպրանոցի խնդրով. անցեալները գրել էր, թէ դպրանոցի հոգաբարձութիւնը դիմել է հոգևոր իշխանութեան, որ իրեն էլ թոյլ տրուի Դպրանոցի համար հոգևորական անձն տեսուչ ընտրելու, և այդ խնդիրը, որպէս թէ, մօտ է իրականանալու։ Իսկ այժմ էլ գրում է, որպէս թէ արդարև դպրանոցին հոգևոր տեսուչ է կարգուելու, և այդ առթիւ յիշում է, թէ դպրանոցի կանոնադրութեամբ պահանջւում է, որ տեսուչը լինի հոգևորական և դպրանոցից դուրս ուրիշ պաշտօն չունենայ, մինչդեռ ներկայ տեսուչն աշխարհական է և միևնոյն ժամանակ Կոկոյեան դպրոցի դասարանների տեսուչ (инспекторъ классовъ)։ Մենք զարմանում ենք, որ «Пр. Кр.»-ի խմբագիրը լաւ ծանօթ լինելով թէ տեղական հանգամանքներին և թէ մեր հոգևոր իշխանութեան կազմակերպութեան ու բանած դիրքին, դեռ հաւատում է, որ Դալուստ Չարխչեանը կարող է, մինչև չմեռնի, դպրանոցն ազատել իր ներկայութիւնից։

—

Այս օրերս վախճանուեց տեղիս եկեղեցական հոգաբարձութեան անդամ և քաղաքիս ս. Գէորգ եկեղեցու երեսփոխան Գաբրիէլ Խասաբեանը։ Սա մի հասարակ, աղէտ մարդ էր, բայց հոգով ու սրտով կպած իր եկեղեցուն, որը պայծառացնելու համար ոչ մի ջանք չէր խնայում։ Նա վերանորոգեց և փառաւորեց եկեղեցին։ Դժուար թէ նրան մի օրինաւոր յաջորդ գտնուի։ Եկեղեցում գամբանական խօսեցին արժ. Մուշէղ վարդապետը և նոյն եկեղեցու միաբան ս. Մկրտիչ քահ. Տէր-Յակոբեանը։ Առաջինը խօսեց ընդհանուր առմամբ մարդուս պարտաւորութիւնների մասին դէպի անձը, ընտանիքը և հասարակութիւնը՝ առանձնապէս կանգ առնելով վերջին կէտի վրայ բնաբան առնելով «Պատրաստ կացէք, որովհետև չգիտէք, թէ երբ պիտի գայ Տէրը, հաւախօսին թէ կէս գիշերին». շատ ազդու էին մանաւանդ գամբանականի այն մասերը, ուր խօսում էր քահանայից և երեսփոխականների համերաշխութեան մասին, այլ և, թէ՝ ոչ ոք թող չասի, որ դեռ երիտասարդ է, ժամանակ կայ առաջը գործ շինելու կամ առողջ է՝ և ոյժ կունենայ հասարակական գործին նուիրուելու —պարտականութիւն կատարելը երբէք վաղ չէ, բայց միշտ կարող է ուշ լինել։ Տ. Մկրտիչ հայրը գրուատեց հանգուցեալի գործունէութիւնը, որի միջոցին ինքն էլ արտասուեց և ներկայ եղողներն էլ լացացրեց։ Արդարև ս. Գէորգ եկեղեցին կորուստ ունեցաւ։ Գ. Խասաբեանը դեռ երիտասարդ էր և համարեա յանկարծամահ եղաւ։

Արատու

Նոր-Նախիջևան, 29 նոյեմբ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

—

ԱՆԳԼԻԱ

Թերթերն երբև լուր հաղորդեցին, թէ կառավարութիւնը մտադիր է վերացնել Հարաւային Աֆրիկայում բուէր կանանց և երեխաների համար սարքած կեդրոնացման բանակները, որոնք այնքան տրտունջներ են յարուցանում նոյն իսկ Անգլիայում։ Սակայն այդ լուրը ճիշտ չէ։ Կառավարութիւնը մտադիր է միայն մի քանի միջոցներ ձեռք առնել այդ բանակները վերակազմելու համար։ Այդ մասին լրագրները հաղորդում են հետևեալը։ Կեդրոնացման բանակներում պահուող կանանց և երեխաների թիւը հասնում է 100 հազարի։ Երբ լորդ Ռոբերտսը հրաման տուեց քարուքանդ անելու բուէրների ագարակները, զինուորական իշխանութիւններն առացին, թէ անհրաժեշտ է կանանց և երեխաներին փոխադրել առանձին բանակներ, նրանց

նանը։ Նիցշէն բոլորովին չի ցանկացել շարունակել և աւելի զարգացնել որ և է վարդապետութիւն՝ նա բնաւ այն չէ, ինչ որ գերմանացիներն անուանում են «Weiterdenker» (հեռու մտածող)։ Նա ամեն ինչ քաղել է իր ֆրանսացի համախոհներից կամ պատրաստի գտել է գերմանացի նախորդների մօտ։ «Գերմարդի» ամբողջ թէօրիան, որին նայում են որպէս Նիցշէի վարդապետութեան ամենաօրինակելի մասի վրայ, մենք գտնում ենք արդէն Ռընանի «Dialogues»-ների մէջ, որոնք հրատարակուած են 1876 թ.։ Հէնց այդ թուականին էլ գլխաւորապէս սկսւում է Նիցշէի գրական գործունէութիւնը։ Ռընանն ասում է. «Ինչպէս որ կենդանական թագաւորութիւնից է առաջ եկել մարդկութիւնը, այնպէս էլ մարդկութիւնից առաջ կըգայ աստուածութիւնը»։ Նիցշէն ասում է. «Մարդս անասնի և գերմարդի մէջ ձգուած լար է», այսինքն միջին տեղն է բռնում։ Ռընանն ասում է. «Կատարելապէս հնարաւոր է ենթադրել, որ (հարկաւ մեր մոլորակից դուրս. Ռընանը միշտ զգոյշ է, որպէս եզուիտների աշակերտ) կան այնպիսի էակներ, որոնց վերաբերմամբ մարդ նոյնն է, ինչ որ անասունը մարդի վերաբերմամբ»։ Նիցշէ գրում է. «Ի՞նչ է կապիկը մարդի վերաբերմամբ. Նրա ամօթի առարկան, ամօթի՝ որ նրան ցաւ կամ ծիծաղ է պատճառում։ Կապիկ դրութեան մէջ է մարդ, երբ վերջինս համեմատենք գերմարդի հետ»։ այսպիսի շատ օրինակներ կարելի է բերել։ «Գերմարդն աշխարհի իմաստն է (այն է)»,— ասում է Նիցշէն։ Դեկադենտութեան՝ համախոհների մեծ մասն այնպիսի մարդկանցից է բաղկացած, որոնց խիստ հաճելի է ազնուականութեան (Aristokratismus) թէօրիան։ Այդ թէօրիան ամբողջ ուղղութեան կեդրոնն է կազմում։ «Ամեն ինչ լաւագոյնին»—ահա անհատականութեան (Individualismus) նշանաբանը, իսկ ամենալաւերը՝ դրանք արտօնեալ դասակարգերն են, այն մարդիկը, որոնք այնպէս թէ այնպէս հասարակութեան մէջ նշանաւոր, փայլուն դիրք ունեն։ Բնութիւնը նրանց համար է շռայլում հարստութիւնները, նրանց համար է այգեգործը, երկրագործը քրտինքը ճակատին չարչարւում։ Այդ մարդիկ իրենց աշխարհի օրէնսդիրներ և իշխողներ են համարում ու պահանջում են, որ տգէտ ամբոխն իրենց սորկի պէս ծառայի։ Սակայն անցել են, մասամբ, այդ արիստոկրատիայի, բուրժուազիայի լաւագոյն օրերը, իսկ նրանց կեանքի մնացած օրերն էլ համրուած են։ Որքան ուզում են թող իրենց խաբեն պատիր յոյսերով և անոյշ երազներով, նրանք պիտի ոչնչանան, նոյն իսկ հէնց Նիցշէի խօսքերի վրայ հիմնուելով, որովհետև ծոյլերը շատ են և ոգու մեծ ոյժ ունեն, մինչդեռ իշխողները սակաւ են և նրանց պակասում է հոգու արիութիւնը։ Այդ բուրժուա դեկադենտներն իրենց խիղճը թագցրել են ոսկու տոպրակների մէջ և ջանք են գործ դնում կոխոտել մարդկութեան խիղճը, աղքատների և թշուառների անհամարելի սրբազան իրաւունքները։ Սակայն դեկադենտութիւնը, որպէս որոշ ժամանակաշրջանի անհարազատ ծնունդ, որոշ ժամանակում էլ կըմեռնի։

Մի քանի խօսք ևս կուզեմ նուիրել Նիցշէի կանանց հարցի մէջ բռնած դիրքի մասին։ Նիցշէն կանանց մէջ է մեծացել կանայք նրան միշտ սիրել են, այժմ էլ ամենից շատ նրա գրուածքները կանայք են կարդում։ Սակայն Նիցշէն կանանց ատող է, որպէս և իր ուսուցիչ Շոպէնհաուէրը։ Նա ասում է. «Կինը ուսանում է միայն իշխանութիւն ձեռք բերելու համար. նա ճշմարտութիւն չի որոնում. մի՞թէ ճշմարտութիւնը կարող է հետաքրքրել կնոջը. Նրա համար աւելի զզուելի, օտար, թշնամական բան չկայ, քան ճշմարտութիւնը. Նրա արուեստն է՝ սուտը, իսկ գլխաւոր պարապմունքը՝ արտաքին տեսքը և գեղեցկութիւնը»։ Նիցշէի կարծիքով, կինը միայն խոհանոցի համար է ստեղծուած, իսկ մարդի և կնոջ յարաբերութիւնների մասին խօսելով, ասում է, որ կնոջ վրայ միայն արևելեան հայեացքով կարելի է նայել։

Մի երկու խօսք էլ մեր նոր մարգարէ Նիցշէի քրիստոնէական և այլ կրօնների մասին ունեցած հայեացքի նկատմամբ։ Որպէս քիչ առաջ առիթ ունեցայ ասելու, Նիցշէն քրիստոնէութեան կատաղի թշնամի է. նա ինքն իրեն անուանում է «Antichrist» (Նեռ, հակաքրիստոնէական)։ Նիցշէի կարծիքով, կրօնը և գիտութիւնը միշտ անհաշտ պիտի մնան, ուստի ամեն տեսակ աստուածաբանութիւն, որ հաւատը գիտութեան հետ միացնել է ձգտում, «անկրօն, ամբարիշտ գործի մէջ է»։ «Հրաշալի ոյժերը, որոնք առաջ բերին քրիստոնէական առասպելը, վաղուց արդէն գոյութիւն չունին»։ «Աստուածաբանական ցնորք է քրիստոնէութիւնը բուն պատմական հողի վրայ կրկին հաստատելը»։ «Աշխարհից փախչելը հնագոյն քրիստոնէութեան նշանն է. այդ կրօնին յատուկ է աշխարհն ուրանալը»։ Բողոքականութեան մասին ասում է Նիցշէն, որ նա քրիստոնէութեան վերջին և անհերքելի ձևն է. սակայն այդ ձևը նրան դուր չէ գալիս։ Բողոքականութիւնը նրա ճաշակի, նրա բնազդի դէմ է. նա քրիստոնէութեան և բանականութեան կէս անդամալուծութիւնն է։ Իսկ քրիստոնէութիւնն առհասարակ «իր մեղքի գիտակցութեամբ» նրան հիւանդութիւն է թւում։ Ըստ Նիցշէի, բուդդայականութիւնը գլխաւորապէս այն առաւելութիւնը ունի քրիստոնէութեան դէմ, որ Բուդդայի հետևողը ձգտում է աւելի ցաւերից ազատուելու, քան կատարելութեան և բարոյական բարեմասնութեան, առողջապահական տեսակէտից մերժելով ամեն ինչ, որ ցաւ և հոգս է պատճառում։ Բուդդայականութիւնը կռիւ է ցաւերի դէմ, մինչդեռ քրիստոնէութիւնը կռիւ է մեղքերի դէմ։ Բուդդայականութիւնը կատարում է ինչ որ խոստանում է, քրիստոնէութիւնը խոստանում է ամեն ինչ և ոչինչ չի կատարում։ Նիցշէն ծաղրում է Ռընանին, որ նա Աւետարանի Յիսուսին մի հսկայ, հերոս, հանճար է դարձնում. Նրա կարծիքով, ընդհակառակն է։ Նիցշէն դարավերջի զաւակ է. իսկ ո՞վ մեր 19 լուսաւոր դարում քարեր չի շպրտում քրիստոնէութեան Մեծ Հիմնադրի և Նրա վարդապետութեան վրայ։ Զանազան Նիցշէներ կըգան, կերթան, կըմոռացուին, իսկ Գողգոթայի անմեղ նահատակը յաւիտեան կապրի մարդկութեան մեծ մասի սրտում։

Ա. Եղիզար

պատոնելու համար սովամահից և սներից յարձակումներից։ Բայց շուտով պարզ- յայտուեց, որ բանակներում կեդրոնաց- րած կանայք և երեխաները ճանճերի պէս կոտորւում են վատ կերակրուելու և իրար վրայ կուտակուած լինելու պատ- ճառով. այսպիսով բանակները չծառա- յեցին իրենց նպատակին: Այս բանը տես- նելով զինուորական իշխանութիւններն սկսեցին պնդել թէ կեդրոնացման բա- նակներն անհրաժեշտ են պատերազմա- կան շարժառիթներով։ Բայց յետագայում ինքը կառավարութիւնն էլ համոզուեց, որ ագարակներն այրելով վնաս է բերում ամենից առաջ անգլիական զօրախմբերին և, միւս կողմից, բանակներում պահուող երեխաների կոտորածը բոէրներին չի դրդում անձնատուր լինելու։ Այս բոլորն ի նկատի ունենալով, կառավարութիւնն այժմ զիջումներ է անում հասարակաց կարծիքին։ Կեդրոնացման բանակների բնակիչների մի մասին նա թոյլ պիտի տայ տեղափոխուելու ծովափը—Կապըշ- տադի և Պորտ-Ելիսաբէթի շրջակայքը, որի կլիման առողջարար է։ Բացի դրա- նից, որպէսզի բանակներում պահուող կանայք և երեխաներն իրար վրայ կու- տակուած չլինեն, փոքրաթիւ խոշոր բա- նակների տեղ կըշինուեն մեծ թուով փոքրիկ բանակներ։ Վերջապէս, մտա- դրութիւն կայ բանակների բնակիչների մի մասն ուղարկելու այն բոէր բնտանիք- ները, որոնք ապրում են խաղաղ շրջան- ներում։

—

ՖՐԱՆՍԻԱ

Մամուլը նորից սկսել է զբաղուել Դրայֆուսի գործով։ Լաբօրին և մի ուրիշ անձ, դատ են բաց արել Լիոնի «Le Petit Sentier Juif» լրագրի դէմ զրպար- տութեան համար: Գործը պիտի քննուէր դեկտեմբերի 4-ին (17-ին): Միւս կող- մից «Indép. Belge»-ի Պարիզի թղթա- կիցը հաղորդում է, թէ Դրայֆուսի ըն- տանիքը երևան է հանել մի «նոր հան- գամանք», որը հնարաւորութիւն պիտի տայ նրան վերաքննել տալու Դրայֆուսի գործը։ Սակայն վերջինիս ազգականներն ու բարեկամները մտադիր չեն գործը յարուցանելու մօտիկ ապագայում, աւելի լաւ համարելով սպասել, որ կրքերը բո- լորովին խաղաղեն։ Բելգիական լրագրի թղթակիցը խոստանում է աւելի ման- րամասն տեղեկութիւններ հաղորդել այս մասին:

ՀՆՈՒԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

Ինչպէս հաղորդում է Կիտչեներ Բել փաստից, Ֆրենչը զեկուցագրել է, որ զօրավար Կրոյցինգերը ծանրապէս վի- րաւորուած է Հաննովերասողից ոչ հե- ռու բլոկհաուզների գծին անցնելու փորձ անելիս և գերի է բռնուած։

—Հարաւ աֆրիկեան պատերազմի մա- սին ունեցած այն հայեացքի աւելի, որ Ռոզբերին յայտնեց Չեստերֆիլդում դեկտ. 4 ին իր արտասանած ճառի մէջ, հաղորդւում է, թէ Ռոզբերին ու- զում է, որ կարելոյն չափ ընդարձակ ներումն շնորհուի Հարաւային Աֆրիկա- յում, և այն ամեն բոէրներին, որոնք հաւատարմութեան երդում կը տան, տրուին քաղաքացիական բոլոր իրաւունք- ները: Որքան շուտ ենթարկուին նրանք քաղաքացիական պատասխանատուութեան այնքան լաւ կը լինի։ Երկիրը վերջնա- կանապէս խաղաղեցնելուց առաջ պէտք է հիմնել վարչական անձերի մի յանձ- նաժողով, Հնդկաստանի պէս, որն իբրև ազգի ներկայացուցիչ պէտք է երկրի մէջ վերականգնի խաղաղութիւնը, կար- գը և անդորրութիւնը. այդ յանձնաժո- ղովին կից պիտի կազմուի լիազօրների մի մասնաժողով մեծամասնութեամբ ան- գլիացիների, որի պարտքը կը լինի ագարակներ շինելու: Այսպիսով Ռոզբե- րին ուզում է, որ գործը դրուի ամենա- ընդարձակ հիմունքների վրայ։ Ի վերջոյ նա պահանջեց, որ ոչնչացնուի այսպէս կոչուած կիտչեներեան կոչը։

—

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

—

Խուզարկու շներ. — Միացեալ-Նա- հանգների Օհիօ նահանգում անցեալները սպանել էին մի խեղճ պառաւի, որ ապ- րում էր Բլադենսբուրգի մօտ իր տնա- կում։ Սպանութիւնը մի հաստ գաւա- զանով էին կատարել։ Սպանողն անյայտ կորել էր։ Այն ժամանակ որոշում են Ուտիքայից բերել տալ երկու խուզարկու շուն, որ Օհիօ նահանգի սեպհականու- թիւնն է կազմում։ Երբ որ շները ճանա- պարհից յոգնած լինելով հանգստանում են, նրանց տանում են սպանուածի մօտ, ցոյց են տալիս գաւազանը, որով սպա- նել էին և յանցագործի հետքը։ Շներն այդ ամենը հոտոտում են և սկսում ա- ռաջ վազել, բայց հասնելով մօտակայ քուչան, կանգ են առնում—հետքը կորած էր։ Նրանք չորս-հինգ անգամ դառնում պալիս են մինչև այդ տեղը և կանգ առ- նում. վերջապէս նրանք նոյն քուչով ա- ռաջ են գնում դէպի հարաւ և հասնելով գիւղի սահմանին նորից կանգ առնում. նորից կորցրել էին հետքը։ Բայց մի կարճ շփոթութիւնից յետոյ վազում են դէպի կամուրջը, որ ձգած էր փոքրիկ գետակի վրայ և գետի միւս ափին գըտ- նում են յանցագործի ոտքի հետքերը. երևի յանցագործն այստեղ իր ձեռներն ու շորերն էր լուացել: Այնուհետև շները նորից վազում են յետ և կանգ առնում սպանուածի տան կողքի դրանը, ուր ապրում էր Հուկ անունով մի վարձավկ- րոյ։ Դատաւորները շրջապատում ու խուզարկում են տունը և գտնում այն կօշիկները, որոնց հետքը գտել էին շը- ները։

—

Ծովային երկաթուղի. — Անգլիա- կան կուրորտ Բրայտոնը մի նորութիւն մտցրեց իր կեանքի մէջ. ծովային եր- կաթուղի. Երկաթուղու մի կայարանը շինուած է ծովածոցի մի ափին, իսկ միւսը—հանդիպակաց ափին։ Ռելսը ամ- րացրած է ցեմենտի կոյտերի վրայ, իսկ դրանք էլ ծովի յատակի ժայռերի վրայ։ Ռելսերը երևում են միայն տեղատուու- թեան ժամանակ, իսկ միւս ժամանակ նրանք ծովի ջրերի մէջ թաղուած են. վագոններն առանձին յարմարութեան շնորհիւ շատ բարձր են ակներից. վա- գոնների կտուրները նման են նաւային տախտակամածների և ուղևորները կա- րող են այդտեղից դիտել ծովային պատ- կերներ։ Ի հարկէ ամեն ինչ այնպէս հաս- տատուած և պինդ է շինուած, որ ոչ մի ծովային հոսանք կամ ալեկոծութիւն վտանգ չսպառնայ երկաթուղու գնացքին որը ելեքտրականութեամբ է շարժւում։

—

Լորդ Բայրոնի թուրը.—Լորդ Բայ- րոնը, ինչպէս յայտնի է, Յունաստանի ազատութեան համար կռւում էր Թուր- քաց դէմ և այնտեղ էլ գտաւ իր մահը 1824 թուին: Աւանդութիւնն ասում է, որ նա ունէր Դամասկոսի պողպատեայ մի թուր, որ զարդարուած էր ոսկէ նը- կարներով ու արաբական արձանագրու- թեամբ. երախակալի վրայ փորագրած է եղել նաև բանաստեղծի անուան սկզբնա տառերը: Բայրոնի մահից յետոյ այդ թուրն ընկնում է մի յոյն սպայի ձեռքը, իսկ նրանից էլ անցնում է մի ամերիկա- ցի մայիորի, որը և իր հետ հայրենիք է տարել թուրը։ Այժմ այդ թուրը մի անգլիացի բոլորովին պատահաբար գը- տել է Չիկագոյում. Բրիտանական մու- զէյն ուզում է գնել այդ թուրը:

—

Նպաստ.—Յայտնի օդաչու Անդրէն 1898 թուին օդապարիկով դէպի հիւ- սիսային բևեռ ուղևորելիս իր վերա- դարձի պայմանաժամ նշանակել էր 1901 թուի յուլիսը։ Այժմ Անդրէի հետքն ան- գամ չկայ։ Մեռած է թէ կենդանի։ Շուեդական կառավարութիւնը ներկա- յումս մի շարք վարձեր է նշանակել այն մարդկանց, որոնք Անդրէի որ և է հետ- քի նշանը կը գտնեն։ Ամեն մի ծովա- տակառի համար նշանակուած է 500 ր., իսկ ուրիշ ամեն մի առարկայի համար 200-ական ռուբլի։

Հետաքրքիր

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Շաբաթ, դեկտեմբերի 8-ին նշա- նակուած է

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ

Ընդհանուր հիմունքներով

(806) 2-1

ՀՐԱՒԷՐ

Այսու յայտնում եմ ի գիտութիւն ժողո- վրդեան, թէ քաղաքիս Վանքի առաջ եկեղեցու նորոգութիւնն աւարտուած է և ամսիս 9 ին, կիրակի օրը, կըկատա- րուի ս. օծումն, իսկ շաբաթ երեկոյեան ժամը 4-ին հանդիսաւոր թափօր կըլինի և ժամերգութիւն։

Երէցփոխ Վանքի առաջ եկեղեցու՝
Իսահակ Բուդաղեանց

(912) 2—2

ՀՐԱՒԷՐ

Այսու յարգոյաբար հրաւիրում են Զըր- կինեանց ս. Կարապետ եկեղեցու բարե- պաշտ ծխականները յիշեալ եկեղեցին ամսոյս 9-ին, առաջիկայ կիրակի, զգնի ս. պատարագի, 12 ժամին, երէցփոխա- նի նոր ընտրութիւն անելու յիշեալ եկեղեցու համար։

Գործակալ ա. մ. եկ. հայոց Թիֆլիսի՝
Զաքարիա քահ. Զարդնեանց

(813) 2—1

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ

ԴՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ ՎԱՃԱՌՒՈՒՄ ԵՆ

«Ռ. Պատկանեանի երկերը», 2 հատ 3 ր.:

Սրովեանի Վէրք Հայաստանի» 1 ր.։

Ալ. Երիցեանի «Կովկասի հայք և ա- մենայն հայոց կաթողիկոսութիւնը» եր- կու հատոր 4 ր.:

«Խոհարարական ձեռնարկ» խոհանո ցըն և իր կարգ ու սարքը, տ. Վ. Ռօ տինեանի 1 ր.։

«Փոքրիկ ընթերցանութիւնը», Յ. Տէր-Միքայէլեանի 25 կ.։

«Սուրբ գրոց հին-ուխտի պատմու- թեանց ընդարձակ աշխարհագրութեամբ և աշխարհի անցքերով, յարմարեցրած ժողովրդի ընթերցանու- թեան համար Դ. ք. Մանդակունու 2 ր. 50 կ.։

«Ընթերցողների ուշադրութեանը»՝ Մես. քահանայ Մելիքեանի, 10 կ:

«Այբբենարան տանը ուսուցչի», կար- դալ սովորելու համար 94 պատկերով, Յովհ Տէր Միքաբեանի 35 կ:

«Առիւծաձև Մհեր», ազգային պոէմա, Գ. Բաղատեանի 25 կ.։

Պատի և ծոցի ռուսերէն և հայերէն զ նազան տեսակ օրացոյցներ։ Գումա- րով գնողներին զիջումն կըլինի։

«Образцы и формы„ довѣренностей, векселей, договоровъ, духовныхъ завѣщаній, прошеній, заявленій, отзывовъ, частныхъ, апеляціонныхъ и кастаціонныхъ жалобъ и т. д. 60 к.

«Русское правописаніе», Я, К. Г 60 к.

Դիմել Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ», Г. Галустяну, Лорисъ. Меликовская. № 11. (801) 2—1

М)90582 52—48

Всеобщая Маленькая Газета

„С.-ПЕТЕРБУРГЪ"

Собствен. типографія.—Изданія годъ девятый: СПБ., Невскій, 139.

Всѣ отдѣлы большихъ газетъ и всѣ новости

Всего міра придворн. извѣстія, правительств. и обществ. дѣло, политика, Дальн. Востокъ, война буровъ, среди газетъ, всѣ выдающіяся происшествія, романы, науки, исторія, докторскія замѣтки и пр., и пр Портреты и картины.

Выходитъ три раза въ недѣлю.

2р. ЦѢНА СЪ ДОСТАВКОЙ И ПЕРЕСЫЛКОЙ: 50к.

за годъ, ЗА ПОЛГОДА 1 руб. за 3 мѣс.

(Ф) 3—2 Редакторъ-Издатель А. Н. Молчановъ.

«РОДИНА» общедоступное изданіе для всѣхъ и обо всемъ

Открыта подписка на 1902 годъ (24-й г. изд.).

КАЖДЫЙ ПОДПИСЧИКЪ ПОЛУЧИТЪ ВЪ ТЕЧЕНІЕ ГОДА:

52 №№ Иллюстр. литер. ЖУРНАЛА: романы, повѣсти, разсказы и пр

52 №№ „ВСЕМІРНОЕ ОБОЗРѢНІЕ": иллюстр. обзоръ міров. жизн.

52 №№ „РАЗВЛЕЧЕНІЕ": юмористика съ рис., задачи и игры.

52 №№ Политической и общественной ГАЗЕТЫ.

За годъ съ пересылкою по Россіи. 6р. Разсрочка: при подп. 2 р. и 1 марта, 1 іюня, 1 авг. и 1 сент. по 1 руб.

24 ДВАДЦАТЬ ЧЕТЫРЕ КНИГИ:

12—„ОБЩЕПОЛЕЗНАЯ БИБЛІОТЕКА „РОДИНЫ".

12—„СОБРАНІЕ РОМАНОВЪ „РОДИНЫ".

12 №№ Модъ и рукодѣлій съ рисунками.

12 лист. модныхъ выкр. съ натур. велич.

12 лист. рисунковъ для выпиловки.

12 раскр. лист. узоровъ тамбурн. раб.

12 №№ прил. „ДОМАШНІЙ ТЕАТРЪ".

12 №№ „Для Дѣтей", пов., разск., съ рисунками.

12 №№ „Сельскаго Хозяйства и Домоводства".

12 №№ НОТЪ.

Подробная программа высылается по требованію безплатно.

„РОДИНА" еженедѣльн. иллюстр. журналъ, газета, ДВАДЦАТЬ ЧЕТЫРЕ КНИГИ, со многими приложеніями, среди которыхъ ЕЖЕМѢСЯЧНЫЙ МОДНЫЙ ЖУРНАЛЪ.

Въ 12 книгахъ „СОБРАНІЕ РОМАНОВЪ" выйдутъ романы, пов. и разск., а „ОБЩЕПОЛЕЗНУЮ БИБЛІОТЕКУ" составятъ:

1) иллюстр. поэма въ стихахъ

Божественная Комедія

Эта поэма ДАНТЕ о грѣхахъ на казаніяхъ и радостяхъ загробнаго міра содержитъ 14.000 стих. и выходитъ со 135 рис. Г. Дорэ въ шести выпуск.; изъ нихъ въ 1902 г. выйдутъ 2 послѣдн. выпуска

2) новое общедоступное иллюстрированное изданіе

„ВСЕМІРНАЯ ИСТОРІЯ"

которая, являясь источникомъ самообразованія и обнимая всѣ моменты исторіи міра въ общепонятномъ изложеніи на основаніи работъ извѣстныхъ историковъ, выходитъ при «Родинѣ» выпусками; изъ нихъ въ 1902 г. выйдутъ десять выпусковъ со мног. рис

Сверхъ того, гг. подписчики «Родины» получатъ:

1) ОТРЫВОЧНЫЙ календарь на 12 мѣс. и 2) Календарь-Собесѣдникъ

3) ВОСЕМЪ КАРТИНЪ подъ назван. „Сокровища русской живописи".

по оригиналамъ, находящимся въ Русскомъ музеѣ Импер. Александра III-го

С.-Петербургъ, Лиговская ул., собственный домъ № 114.

(М) 73211 4—4

Лучшія аттестаціи отъ учебнаго начальства.

За успѣшныя занятія благодарность

И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ

преподаетъ

Полный курсъ БУХГАЛТЕРІИ

ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:

1) Бухгалтерія (двойная италіянская), 2) Коммерческая ариѳметика, 3) Коммерческая экономія. 4) Ариѳметика на счетахъ, 4) Торговыя и вексельныя узаконенія и 5) Коммерческая корреспонденція.

Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб.

Ручательство и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ.

Михайловская № 71.

Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.

Занятія съ 1-го числа

Преподав. ведется по собств. сочиненіямъ

80) Годъ занятій одиннадцатый 100—88

ՆԵՐԱՐԿՈՒՄՆ ՄԱՏԻԿՈՅԻ

(INJECTION AU MATICO)



Գրիմո և ընկ. դեղագործների թոյլ է տրուած Ռուսիայում։ Հեղուկի մէջ շահագործուած են պերուանեան Մատի- կո բոյսի յատկութիւնները, մի բոյս, որ զարմանալի կերպով բժշկում է հնութեան (սերմնաթափութիւն) և մի քանի տարուայ ընթացքում համաշխարհային հռչակ է ստացել։ Կարճ ժամանակում բուժում է ամենազօրեղ սերմաթա- փութիւնները։

Պարիզ, 8 Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։

(М) 200345 43—20

ՊԱՏԱՀԱԿԱՆ ԻՐԵՐ

Ծախւում են գործածուած, նոր և բոլորովին լաւ կանգնած կահկարասիք, տան կահաւորելու իրեր, բրոնզ, սարք, ոսկի, թան- կագին քարեր։ Москва, Неглинный проѣздъ, пассажъ Солодовникова рядомъ съ Абрикосовымъ. Մոսկուա, Սոլոդովնիկովի պասաժ մուտքը Նեգլինից։ (М.) 8514 23—17

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՓՈՐՁԵԼ

որ Ն. Բոգենբլատի „ՀԱՒԱՆՆԱ" խիկական թամբակ

կայ միմիայն

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ

А. КОЙЛЮ и К° ՌՈՒՍԱԿԱՆ ՏԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ

գլխաւորների մէջ

«Հաւաննա» թամբակը, ինչպէս ամենքին յայտնի է, ոչնչացնում է ծխա- խոտի դառնութիւնը և ծծում է ՆԻԿՈՏԻՆԸ (ծխախոտի թոյնը). որով և անվնաս է դարձնում ծխելը։

Կան բազմաթիւ խարդախածներ։

(М) № 60586. 15—7